633

մեզնէ կաւակներն ենք՝ չեր, մեզ մի՛ մոռացեք...

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

Ա ՄԱՍ

Մեզի՛ վաւերականներն եկի՛ ջեր, մեզ մի՛ մոռացեք...

5880
Գրադարան
№ 21

ՀԱՅ

ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

Ա ՄԱՍ

...Մենք կսպասենք ՎՐԵԺԻ դատաստանին և կհավատանք, որ մեր տառապանքեն **հայկական նոր փոթորիկը** պետք է պայթի և որ այդ վերջինեն պիտի ծնին հսկաները **հայ կամքի վրեժխնդիրները՝** տիտան զորավարները՝ մահացու գիտություններով սպառազեն:

Գարեգին Նժդեհ

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒԹՅՈՒՆԸ

''...Դժբախտ հայրենիքի հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն են, որ կոչ կանեն զենքի, զինավարժության ու վրեժխնդրության'':

Անդրանիկ Օզանյան

Մարդիկ կարող են լեռներ խորտակել, գետերի հունը փոխել, բայց ազատության տենչը խեղդել մարդ-էակի մեջ՝ անհնար է, իսկ ժողովրդի մեջ՝ առավել ևս: Ազատության ձգտող ժողովուրդը պայքարում է իր ազատության համար. սկիզբ են առնում ազգային-ազատագրական շարժումները, պայքարի ամենատարբեր ձևերով: Դրանցից մեկն էլ ահաբեկչությունն է: Հիշենք թեկուզ ցարիզմի դեմ պայքարող անհատներ Բորիս Սավինկովին, Իվան Կալյաևին, Սոֆիա Պերովսկայային, Մարիա Սպիրիդոնովային, Ավստրո Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդին սպանող սերբ հերոս Գավրիլա Պրինցիպին:

Թոքր ժողովուրդների մոտ ահաբեկչությունն ավելի շատ վրիժառության բնույթ է կրում: Այդպես է և հայերիս պարագայում: Անվեհեր հայորդիների կատարած ահաբեկչությունները սրբազան վրեժխնդրություններ են, բողոք, իրենց ձայնը լսել տալու միջոց, քանի որ արդարացի է մեր պահանջը, իրավացի մեր դատը և սրբազան՝ մեր պայքարը:

Առաջին հայ հայտնի վրիժառուն տարոնցի **Արամ Արամյանն** է: Նա 1892թ. Հ.Յ. Դաշնակցության ընդհանուր ժողովում առաջարկեց ահաբեկչություն սկսել թուրքերի նկատմամբ, որն սկզբում հավանություն չըգտավ: Գերադասեցին պայքարի ուրիշ ձևեր:

Հետո, այնուամենայնիվ, որոշ փորձեր կատարվեցին: Հայ օրիորդներ Ռուբինայի, Աստղիկի կողմից մահափորձեր կատարվեցին հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը որոնացող-իրագործող Աբդուլ Համիդի վրա: 1905թ. հուլիսի 21-ին քաջարի Զարեհը զոհվեց, պայթեցնելով իր կառքը, հուսալով, որ կզոհվի նաև մոտակայքում գտնվող Աբդուլ Համիդը: Ժամանակների ու հանգամանքների բերումով հայ իրականության մեջ և՛ բարոյապես, և՛ նյութապես խրախուսվեց վրեժխնդրությունը, քանզի խաղաղ դիմումները անուշադրության էին մատնվում:

1915թ. ի կատար ածվեց հայերի ցեղասպանությունը: Մազապուրծ շատ հայեր, սփռված աշխարհի տարբեր անկյուններում, չէին կարող մո-

ռանալ իրենց աչքով տեսած ու ապրած տարագրությունը, հայերի սպանդը, ամենաահավոր տանջանքներն ու խոշտանգման այն բոլոր ձևերը, որոնց ենթարկվեցին իրենց հայրերը, մայրերը, քույրերը, եղբայրները, զավակները:

Հայի վիրավոր արյունը նորից դուրս ժայթքեց ափերից:

1921թ. մարտի 15-ին, երկար հետապնդումներից հետո 25 ամյա **Սողոմոն Թեհլերյանը** Բեռլինում դեմ-դիմաց գնդակահարեց իր ժողովրդի դահիճ Թալեաթին: Մինչ այդ, Թիֆլիսում 20-ամյա **Արամ Երկանյանը** սպանել էր մուսավաթական Ադրբեջանի վարչապետ Խան-Խոյսկուն, որը Բաքվի 30 և Շուշիի 35 հազար հայերի ջարդի կազմակերպիչն էր: Արամը Բեռլինում իր ընկերոջ՝ **Արշավիր Շիրակյանի** հետ միասին գնդակահարեց Տրապիզոնի հայերի դահիճներին՝ Բեհաէտդին Շաքիրին և Ջեմալ Ազմիին:

Եղեռնի ծրագիրը հաստատողին՝ Սաիդ Հալիմին ևս Արշավիրը գնդակահարեց՝ 1921թ. Հռոմում:

Թեև թուրքական ֆաշիզմը փշրեց մեր ծյուղերը, բայց մեր արմատները չկարողացավ մեռցնել: Հայ վրիժառու **Միսաք Թոռլաքյանը** Պոլսում սպանեց մուսավաթական Ադրբեջանի ներքին գործոց նախարար Պեհուտ խան Ջիվանշիրին: Իսկ **Պետրոս Տեր-Պողոսյանը** և **Արտաշես Գևորգյանը** այժմ երևանաբնակ **Ջարեհ Մելիք-Շահնազարյանի** հետ Թիֆլիսում գնդակահարեցին Ջեմալին: Գազանաբարո Էնվերը նույնպես իր վերջ գտավ 1922թ.՝ Միջին Ասիայից Ափղանստան փախչելիս, ընդհարվելով արցախցի **Հակոբ Մելքումովի** գլխավորած Կարմիր բանակի ջոկատի հետ:

Այսքանով, իհարկե, վերջ չգտան հայ ժողովրդի բոլոր դահիճները, բայց հաստատվեց, որ հայը պայքարելու է մինչև իր սրբազան նպատակին հասնելը:

Ն. Գալստյան
Հ. Մանջյան

Ու պայքա՜ր, պայքա՜ր, պայքա՜ր երգեցի,
- Զեզի ընծա՜, **հայ մարտիկներ** -
Գրիչս եղավ անթրոց սրտերու հնոցի...
- Զեզի ընծա՜, **քաջ մարտիկներ** -
Եղեգնյա զրրչով վրրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

Դանիել Վարուժան

ԱՐԱՄ ԱՐԱՄՅԱՆ

/Աշոտ, Թաթուլ, 1870, Կարին - 02.08.1899, Կարին/
Այս խանդավառ ու անծնազոհ ֆիդային առաջինն էր, որ տվեց հեղափոխական տեռորի /ահաբեկչության/ գաղափարը /Հ.Հ.Դ. 1-ին ընդհանուր ժողովին, 1892թ./:

ԲԱՐԳԵՆ ՍՅՈՒՆԻ

/Պետրոս Փաոյան, 1879-1896.08.14/

Ծնվել է Ակնա գավառի Բինկյան գյուղաքաղաքում: Սովորել է Ս. Պոլսի ''Ազատ Գափու'' կոչվող նավաշինական ուսումնարանում: Նա ուսանելու տարիներին կազմակերպել է ''Սյունիք'' ֆիդայական խումբը, որի հիմնական նպատակը արևմտահայերի իրավունքների պաշտպանությունն էր:

1894-96թթ. արյունարբու Սուլթան Համիդի կազմակերպած կոտորածը վերջ տալու և եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու համար 1896թ. օգոստոսի 14-ին պատանի Բարգենը կազմակերպեց ''Բանկ Օտոմանի'' /Օսմանյան բանկ/ գրավումը:

Չորս մլն ֆրանկ դրամագլուխ ունեցող բանկի գրավումը խուճապ առաջացրեց եվրոպական դեսպանների մոտ, որոնք շտապեցին Հայկական հարցը լուծելու մասին խոստումներով համոզել տղաներին՝ չպայթեցնել բանկը: Սուտ խոսքերին հավատալով՝ հայ մարտիկները դեսպանների տրամադրած նավով հեռացան Ֆրանսիա և Արգենտինա:

Բարգեն Սյունին զոհվեց գրավման պահին, երբ իր ընկերներին փրկելու համար մարմնով ծածկեց ռումբը:

ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆ



1896 թ. 14-ը ՕԳՈՍՏՈՍԻ Կ. ՊՈԼԻՍ

Բաբգեն Սյունուն է նվիրված ''Պանք Օթման'' երգը:

Պանք Օթման գրավված է,
Դաշնակցության կոմիտեն
Նրա մեջը լեցուցած է
Պայթիչ, խորտակիչ ռումբով:

Ամեն հայ քաջ սպասում է
Այն սիրելի րոպեին,
Թե երբ պիտի նետվի ռումբը,
Որ խորտակվի թշնամին:

Երբ այս լուրը Համիդ լսեց,
Քովը կանչեց Նազիմը,
Դնա,-ասաւ,-հանդարտեցուր
Այդ խռովյալ հայերը:

Ահա ընկավ պատուհանեն
Մի կլորիկ ռումբարա,
Հոն սառեցավ Սուլթան Համիդ,
Եվ իր վատ հոգեթ փաշան:

Պանք Օթման զետեղված է
Բաբգեն Սյունի հարկին տակ.
Հոն զոհվեցավ Բաբգեն Սյունի,
Դաշնակցության վեհ հսկան:

Դ Ր Ո, Դրաստամատ Կանայան
/Իգդիր, 00.03.1883-1956.01.05: Բոստոն, ԱՄՆ/



Բաքու, 1905, 11-ր Մայիսի, ժամը 13.30...
Ջանիերկուամյա Դրաստամատը ահաբեկել է հայ-թաթարական
ջարդերի կազմակերպիչ Բաքվի նահանգապետ Նակաշիձեին...

Հայ հեղափոխության ռահվիրան կորոշի անձամբ կատարել մահափորձը սուլթանի դեմ։

Սակայն ինքն ու իր մարտական ընկեր

Վռամշապուհ Քենդերյանը զոհվեցին ռումբի փորձարկման ժամանակ, Բուլղարիո Վիտոշ լեռան վրա...

1905 թ. ՄԱՐՏԻ 27

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կ. Պոլիս, 1905, հուլիսի 21...

Եվս մի պահ և արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի դեմ իր կյանքի գնով մահափորձ կկատարի քաջարի ՋԱՐԵՀԻ։ Դժոխային մեքենայի պայթյունից /ռումբը պատրաստել էր 1905թ. մարտի 27-ին զոհված Քրիստափոր Միքայելյանը/ կզոհվեն հարյուրավոր թուրքեր...

ՀՄԱՅԱԿ ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ

1904թ. սեպտեմբերի 13-ին 18-ամյա կարսեցի Հմայակը գնդակահարեց սևհարյուրյակին գնդապետ Բրիկովին /այլ աղբյուրներում՝ Բիկով/: Այդ նա էր, որ դարձավ Թորգոմի /Թուման Թումանյանց/ ,,Ոսկան'' խմբի կործանման պատճառը...

1904-ի հուլիսի 28-ին Ֆիդայական ,,Ոսկան'' խումբը Օլթիով գնում էր Երկիր՝ օգնելու իրենց արևմտահայ եղբայրներին: Սահմանում նրանք բախվեցին զինված մեծաքանակ թուրքերի և քրդերի հետ: Թիկունքից հարվածում են ցարական սահմանապահները՝ սևհարյուրյակային գնդապետ Բրիկովի հրամանով: Մեծ մասը զոհվում է, մի մասն էլ վիրավոր գերի է ընկնում: Բրիկովի հրամանով բոլոր հայ գերիները սվինահարվում են թուրքերի ներկայությամբ:

Բրիկովի սպանությունը կազմակերպել էր հանրահայտ Ֆիդայի Սևքարեցի Սաքոն /Սարգիս Սարիբեկի Ծովանյան/: Նախապես որոշված էր, որ մահափորձը Սաքոն պետք է իրականացներ: Սակայն Հմայակը առաջարկեց իր թեկնածությունը, պատճառաբանելով.

,,Եթե Սևքարեցի Սաքոն վտանգի ենթարկի ազգի համար այնքան թանկ իր կյանքը՝ կորուստը մեծ կլինի, իսկ եթե ես կատարեմ մահափորձը և թեկուզ կյանքիցս զրկվեմ՝ կորուստը մեծ չի լինի: Եթե չը վստահեք, ես ինձ կզրկեմ կյանքիցս...'':

Հմայակը մի պայման էլ դրեց. բարեհաջող ելքի դեպքում Սաքոն պիտի իրեն տաներ Ջորավար Անդրանիկի մոտ և միջնորդեր նրա խմբում ընդգրկվելու համար:

Հմայակը հաջողությամբ կատարեց իր առաքելությունը:

1905-ին սրվել էին հայ-թաթարական հարաբերությունները, տեղի էին ունենում ընդհարումներ: Բաքվում ստեղծվել էր ինքնապաշտպանության կոմիտե, որը ղեկավարում էր հայտնի հայդուկ Նիկոլ Դումանը /Նիկոլ Տեր-Հովհաննիսյան/: Կոմիտեի անդամ էր նաև Հմայակը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Հմայակ Ջանփոլադյանը զինվորագրվեց կամավորական շարժմանը:

ՀՄԱՅԱԿ ՁԱՆՓՈԼԱԴՅԱՆ
(1886 ԿԱՐՍ - 1905 ԲԱՔՈՒ)
ՍԵՎՀԱՐՅՈՒՐԱԿԱՅԻՆ ԳՆԴԱՊԵՏ ԲԻԿՈՎԻ ԱՇԱԲԵԿԻՋԸ

Հերոսներ շատ են եղել, հիմա էլ կան և պետք է լինեն, որ իրենց ապրած տիեզերական մի ակնթարթով հոգի և ավիշ ներարկեն ապրողներին, բայց ուրիշ է լինում հայրենիքի բախտի շուռ եկած անիվը ուղղելու, ճիշտ տեղը դնելու համար մարտիրոսված հերոսը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՀԻՃՆԵՐԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ

1903.14.10. - Թիֆլիսում Դրաստամատ Կանայանը և Հայկ Բժշկյանը դաշյունահարեցին Կովկասի փոխարքա Գ.Ս. Գոլիցինին, որն ստիպված էր 1904թ. վերջերին հեռանալ Կովկասից:

1905.11.05. - Բաքվում Դրաստամատ Կանայանը ահաբեկեց հայ-թաթարական կռիվների սադրիչ, Բաքվի նահանգապետ Նակաշիձեին:

Նույն 1905-ին հայ վրիժառուները իրականացրին.

Գանձակի փոխնահանգապետ Անդրեևի,

զավառապետներ Բոգուսլավսկու, Շմեռլինգի, Պավլովի,

ոստիկանապետ Սախարովի,

պրիստավներ Նաշչանսկու, Ջավախովի, Շումակևիչի, Տեր-Սահակովի նկատմամբ կայացված մահապատիժները:

1919. - Թիֆլիսի Երևանյան հրապարակում Արամ Երկանյանը գնդակահարեց մուսավաթական Ղասիմբեկովին:

1920. - Թիֆլիս, Գոլովինսկի փողոց: Այստեղ Արամ Երկանյանի դիպուկ կրակոցներից ընկան. մուսավաթական Ադրբեջանի վարչապետ Խան-Խոյսկին, մուսավաթական Սարաֆովը, իսկ մյուս դահիճը՝ Խան Մեհմեդովը վիրավորվում է:

1921.19.07. - Ն. Պոլսում Միսաք Թոռլաքյանը գնդակահարեց մուսավաթական Ադրբեջանի ներքին գործերի մինիստր Պեհուտ Խան Ջիվանշիրին:

Մահափորձեր են կատարվել հայահալած քաղաքականություն վարող, հայկական դպրոցները փակող ու հայ-թաթարական ջարդեր հրահրող ցարական սատրապների դեմ:

Մահափորձերը հիմնականում իրագործել են դաշնակցական և հնչակյան գործիչները:

1915թ. ապրիլի 24...

Ն. Պոլսում հայ մտավորականության ձերբակալման օրը Մեծ եղեռնի /զենոցիդի/ սկիզբն էր...

1915-ի հունվարին թուրքական կառավարությունը որոշեց օգտվել պատերազմի ընձեռած հնարավորությունից և բնաջնջել ամբողջ արևմտահայությանը ու այդ ճանապարհով լուծել ,,Հայկական հարցը''։

,,Թուրքիո մեջ ապրող բոլոր հայերը, առանց անհատ մը ողջ ձգելու, փըչացնել որոշած և այս մասին կառավարության ընդարձակ իրավասություններ տված է... Չպիտի թույլատրվի, որ հայ մը օգնության և պաշտպանության արժանանա'' /հայերի բնաջնջումը իրագործող Իթթիհատի գործադիր կոմիտեի 1915թ. փետրվարի 18-ի գաղտնի հրահանգից/։

Հայ ժողովրդի բնաջնջումը իր պատմական Հայրենիքում կատարվեց կայզերական Գերմանիայի աջակցությամբ։ Գերմանական կայսր Վիլհելմ 2-րդի բարոյական անկումը հասավ այն աստիճանի, որ նա Սև արծվի շքանշանով պարգևատրեց գլխավոր դահիճ Թալեաթին։

Անապատին մէջ մեռած հայ մայր մը եւ իր երկու զաւակները (1916)։

...ասում թե ինչի համար էլն վրեժ լուծում վրիժառուները...

Ն Ե Մ Ե Ս Ի Ս

Վրեժի և արդարադատության աստվածուհին

Հատկանշական է, որ թուրք դահիճներին պատժելու գործողությունը կոչվում էր ''Նեմեսիս'' /վրեժի հունական դիցուհին/: Նեմեսիսը անխնա վրիժառու էր, բայց չէր հանդուրժում ծայրահեղությունը: Եվ հայ վրիժառուները միշտ ու անխտիր պահպանում էին Նեմեսիսի պատգամները: Այսպես, երբ Բեռլինում Թալեաթ փաշայի այրու աչքերի առաջ կեսգիշերին սպանվեցին թուրք դահիճներ Ջեմալ Ազմին և Բեհաէտդին Շաքիրը, վրիժառուները ամենևին էլ չցանկացան վերացնել վկաներին:

Այժմ էլ այդ չգրված կանոնը սրբությամբ պահպանում են սփյուռքահայության մերօրյա Ֆիդայիները:

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

/Հակոբ Տեր-Հակոբյան/

Հայ վրիժառության ոգեշնչողներից և ղեկավարներից է:

Ծնվել է 1884թ. հուլիսի 14-ին, Խարբերդի Հյուսենիկ գյուղում: Որբացել է 1895-ին՝ կոտորածների ժամանակ: Սովորել է Ն. Պոլսի Պերպերյան վարժարանում /1897-1901թթ./:

1904-ին մեկնել է ԱՄՆ և այնտեղ էլ անդամագրվել Հ.Յ. Դաշնակցությանը: 1909-12թթ. գրականություն և փիլիսոփայություն է ուսումնասիրել Բոստոնի համալսարանում: Բեղմնավոր է Շահան Նաթալիի գրիչը: Հրատարակել է բազմաթիվ ժողովածուներ: Առավել հայտնի են ''Սիրո և ատելության երգեր'', ''Քավության երգեր'', ''Վրեժի ավետարան'' /հհ. 1,2/, ''Գիրք մատուցման և հատուցման'' գործերը:

Շահան Նաթալին ''Նեմեսիսի'' կազմակերպիչներից էր: Նա էր ղեկավարում Պոլսի հայ մտավորականների մատնիչների ահաբեկման գործողությունը: Այսպես՝ հայորդիների գնդակներից ընկան Վահե Հնսանը, Արթին Քեհյան[1] /Հարություն Մկրտչյան/, Համակ Արամյան, Արշավիր Եսայան և ուրիշներ: Շահան Նաթալին ղեկավարեց Թալեաթ փաշայի ահաբեկումը: Այդ գործում նրան օգնում էին Հակոբ Ջորյանն ու Սողոմոն Թեհլերյանը: Վերջինս էլ Բեռլինում, 1921-ի մարտի 15-ին իրագործեց թուրք դահիճի մահապատիժը:

1943-53թթ. Շահան Նաթալին վարում էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության /ՀԲԸՄ/ Նյու Ինգլընդի շրջանային հանձնաժողովի քարտուղարությունը: 1968թ. Շահան Նաթալին եկավ Երևան և հանդիպեց Հ. Ջորյանի զավակներին: Դրկելով նրանց՝ Նաթալին ասաց. ''Դուք իմացեք, թե ձեր հայրը ով է: Հպարտացեք նրանով'':

Թալեաթի սպանությունը մեկ նպատակ ուներ. համաշխարհային հասարակայնության ուշադրությունը հրավիրել հայ ժողովրդի ողբերգության վրա և դատավարություն սկսել թուրք ոճրագործների դեմ: Այն իրականացավ:

---

1. Քեհյա-տանուտեր:

Ունէինք աչք...ու չուզեցինք տեսնել:
Երբ տեսանք... չուզեցի՛նք հաւատալ:
Կը մորթուինք... բայց չենք ուզեր սորուիլ
ո՛ղջ մնալու ճամբան:
Եթէ ուզենք սորուիլ գէթ մեր անցեալէն...
ունինք շատ բան սորուելիք:
«Թող անգամ մը ալ հայն ըլլար
ոճրագործ, թող անգամ մը ալ
հայն ըլլար բարբարոս ու գազ-
ան: Ինչո՞ւ դեռ
չկրցանք հասկնալ, որ
ոճրագործն ու գազանը բոշայէն
աւելի վ՛արժեն: Անոնց արիւնը ոչ
միայն ծախու չի հանուիր, այլ
անոնց հետ յարգանքով կը
վարուին:
... Հայն այսօր մանաւանդ,
աշխարհի ժողովուրդներուն մէջ
առաջինն պիտի ըլլար յանդուգն:
Ով որ ոչինչ ունի կորսնցնելիք,
ոչինչ ունի վախնալիք»:

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ՝
Նեմեսիսը Հայոց

Եւ Աստուծոյ եւ մարդկութեան երես դարձուցած բանաստեղծը գնում է աղօթելու հին, բայց միշտ կենդանի աստուածներից մէկին՝ Նեմեսիսի... Նրա այդ աղօթքին միանում են նոյն բախտն ու կենսագրութիւնը ունեցող ուրիշ հայ երիտասարդներ՝ երգնկացի, կարինցի, բաղեշցի, եւ աւերակուած ուրիշ գաւառների ծնունդ, ջարդերից հրաշքով կենդանի մնացած որբեր, որոնք վճռել էին իրենց ուժով պատժել աշխարհի կողմից անպատիժ մնացած՝ մի ամբողջ ժողովուրդի արիւնը խմած ու մարսած դահիճներին:

Սիլվա Կապուտիկյան

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

Սողոմոն Թեհլերյան - 1921թ. մարտի 15-ին, Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հայդենբուրգ փողոցում 25-ամյա Սողոմոնը գնդակահարեց Թալեաթ փաշային...

Արամ Երկանյան - 1920թ., Թիֆլիսում 20-ամյա Արամը սպանեց Ադրբեջանի մուսավաթական կառավարության ղեկավար Խան-Խոյսկուն՝ 1918թ. սեպտեմբերի Բաքվի 30 և 1920թ. մարտի 23-ի Շուշիի 35 հազար հայերի ջարդի գլխավոր կազմակերպիչին...

1922թ. ապրիլի 17-ին, Բեռլինում Արամն իր ընկեր Արշավիր Շիրակյանի հետ գնդակահարեց Ցրապիզոնի հայերի դահիճներ Բեհաէտդին Շաքիրին և ջեմալ Ազմիին՝ տիկին Թալեաթի աչքերի առաջ...

Արշավիր Շիրակյան - 1921թ. դեկտեմբերի 6-ին, Հռոմում, 21-ամյա Արշավիրը գնդակահարեց Թուրքիո մեծ վեզիր Սաիդ Հալիմին՝ զենոցիդի ծրագիրը հաստատողին...

Միսաք Թոռլաքյան - 1921թ. հուլիսի 19-ին, Ֆ. Պոլսում /Ստամբուլ/, ''Ճակատամարտ'' թերթի խմբագրատան առաջ 33-ամյա Միսաքը գնդակահարեց Պեհուտ խան Ջիվանշիրին՝ մուսավաթական Ադրբեջանի ներքին գործոց նախարարին, Բաքվի և Շուշիի հայության գլխավոր ջարդարարներից մեկին...

Պետրոս Տեր Պողոսյան, Արտաշես Գևորգյան - 1922թ. հուլիսի 25-ին, Թիֆլիսում, Զհ շենքի մոտ խոտորջուրցի երիտասարդները գնդակահարեցին ջեմալ փաշային...

1922թ. օգոստոսի 4-ին Միջին Ասիայից Աֆղանստան մողոպրելիս արցախցի Հակոբ Մելքումովի գլխավորած ջոկատի հետ ընդհարման ժամանակ սպանվեց Էնվեր փաշան:

Գրիգոր Թաթուլյան /Ավշար կամ Շեկ Առյուծ/ - Նրա պողպատե բազուկների մեջ խեղդվեցին Դերէլ-Զորում կոտորված հայության թուրք դահիճները /1918-22թթ./:

Վրիժառության գործողությունները ղեկավարում էին Ստեփան Ծաղիկյանը և Շահան Նաթալին:

Հովհաննես Թումանյան

ՈՒ ԿԱ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հողմերի առջև ցրված, հալածված,
Քարեքար զարկված, տանջված ու հյուծված
Ի՞նչ է ուզում նա դալուկ շրթունքով,
Անվերջ բողոքով, անզոր խնդիրքով.
Իր փա՞ռքն է ուզում, թե թագն ու գահո՞ւյք...
– Իր կյանքն է ուզում, իր պատիվն, իր գույք:
Ով, ամոթ, ամոթ... ամոթ ամենքին,
Ամոթ և՛ մարդուն, և՛ ժամանակին:
Շունն էլ չըպիտի էն խրնդրեր շանից,
Ինչ մարդն է խրնդրում իրեն նմանից
Էս առատ – արձակ աշխարհքի միջին
Իր կյանքն, իր պատիվն, իր գույքը չընչին...
Ափսո՜ս էն պայծառ, պարզ արեգակին,
Ափսո՜ս էն զառվառ ծըլին ու ծաղկին,
Ափսո՜ս աստղերին, ծովին ալեծուփ,
Ափսո՜ս դաշտերին, լերանց երկնահուպ.
Ինչպե՜ս սրանց մեջ ծընան հըրեշներ
Էսքան մարդատյաց, անխիղճ ու անսեր...
Ո՛չ, հանգիստ, հոգիս, իզուր չի ոչինչ.
Ո՛չ ծիլ ու ծաղիկ, ո՛չ արևը ջինջ,
Ո՛չ խոսքն հանճարեղ, ո՛չ երգը քնքուշ:
Նա մեծ ու զվարթ իմաստուն մի ույժ,
Որ մութն աշխարհից տանում է մարդուն
Դեպի Լույս աշխարհք, սեր, եղբայրություն...
Ամեն մի չարիք ունի իրեն վերջ
Ու կա հաստուցում ամեն գործի մեջ.

Հայ վրիժառուի գնդակից զարկված հրեշը.

5880
ԵՐԵՎԱՆԻ
№ 21
ՄԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ

Ա. ԵՐԻՑՅԱՆ

Ս. ԱՂԱՅԱՆ

Ս. ԹԻՖԼԻՍԵԱՆ

Մ. ԹՈՐԼԱԿՅԱՆ



Ա. ՇԱՀԱԶԻԶ

Մենք հպարտ ենք Ձեզնով՝ աշխարհի համայն հայության առյուծ զավակներով: Դուք կաք մեր հոգիներում, կաք իբրև ողջության հեռանկար, իբրև արյան քաղաքություն, իբրև հայրենի հողի արգասաբեր բույր ու քարի կայծ, կաք իբրև շոշափելի նպատակ, իբրև դեռ լույս աշխարհ չեկած արու զավակ, որ պիտի ծնվի զույգ-զույգ ու հզոր՝ վրեժ լուծելու... Եվ խեղաթյուրվածը ուղղելու: Ձեզ համար լաց չկա: Ողբ չկա: Ձեզ համար մի ցանուցիր եղած ժողովրդի ջերմորեն ու կորովի տրոփող մի մեծ ու անչափելի սիրտ կա, որ հավերժ է, քանի դեռ հավերժ է հավատամքը:

Ց Ա Ն Կ

		էջ
1.	Հայ վրիժառությունը	1
2.	Արամ Արամյան	3
3.	Բաբգեն Սյունի	4
4.	Դրաստամատ Նանայան	6
5.	Քրիստափոր Միքայելյան	7
6.	Հմայակ Ջանիոլաղյան	8
7.	Հայ ժողովրդի դահիճների արդար դատաստանը	10
8.	1915թ. ապրիլի 24	11
9.	Նեմեսիս	12
10.	Շահան Նաթալի	13
11.	Հայ վրիժառուներ	15
12.	Ու կա հատուցում, Հ. Թումանյան	16
13.	Հայ վրիժառուներ	17

- -

Հակոբ Բաղդասարի Մանջյան
Նարինե Ցոլակի Գալստյան

Հ Ա Յ Վ Ր Ի Ժ Ա Ռ Ո Ւ Ն Ե Ր

Ա մաս

Հրատարակության պատրաստեց պատմաբան Ցու. Թորոսյանը
Ձևավորումը՝ Բոգդան Հովհաննիսյանի

Հրատարակվում է ''Կիլիկիա'' բարեգործական-հայրենակցական միության հովանավորությամբ:

Առաջիկայում լույս կտեսնեն

Բ մաս - Արամ Երկանյան
Գ մաս - Սողոմոն Թեհլերյան
Դ մաս - Ա. Շիրակյան, Մ. Թոռլաքյան, Պ. ՏերՊողոսյան, Ստ. Ծաղիկյան, Ա. Գևորգյան:

Ծկամուտի զգալի մասը օգտագործվում է բարեգործական նպատակներով:

2 - 00